

# ԼՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԵՐՅՈՒՄԻՅ ՅԵՏՈՅ

## ՊԼԵԹՉԵԵՒԻՅ

ԱԼԷԶՍԱՆԴԻՐ ԺԱՏՈՒՐԵԱՆԻ

Պատն սրտով միշտ կարդում եմ ես այն էջերն արնալից,  
Ուր ողբվառ մեզ պատմում են խռովութիւններ աշխարհիս.  
Որքան ծաղր է ցեւնել մարդիկ՝ մի՛ օջաղից, մի՛ րանից  
Մռայլ շէմքով, խեթ հայեացքով իրար վերայ նայելիս:

Ես սիրում եմ իմ հայրենիք, սիրում խորին, ջերմ սիրով,  
Եւ ո՛ղջ հոգով նորան յաւէտ բախտ, արեւ եմ փափագում.  
Բայց և ուրիշ խեղճ ազգերին ես չեմ նայում արելով.  
Քշնամութիւնն ինձ օտար է—նա ցեղ չունի իմ կրճքում:

Ո՛չ գովասանք անել մարդի, ո՛չ արնաներկ ձոխ շափնին  
Հոգեգլարձ հիացմունքով չեն բորբոքում իմ արիւն.  
Ես ջերմաջերմ աշօթքներով աղերսում եմ Բարձրեալին,  
Որ երկնառաք սէրն հալածէ մարդկանց սրտից չորութիւն:

Աշօթում եմ, որ աւերիչ, շաժան օրերն յաւիտեան  
Գնան, կորչին--և մոռացած վըրէժ, նախանձ ու չարիք,  
Բոլոր ազգերն անշահ սիրով, խոնարհ Փրկչի վեհ ուսման՝  
Եղբայրանան, կազմեն մի մե՛ծ, հզօր, ազատ ընդանիք:

Մոսկւա, 1899 թ.